ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Լրացավ ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, վաստակաշատ պատմաբան, պատմ. դիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Հրանտ Ալեքսանի Ավետիսյանի ծննդյան 75 և աշխատանքային-հասարակական գործունեության 55 տարին:

Հ. Ավետիսյանը ծնվել է 1927 թ. մարտի 10-ին նախկին Ղարաքիլիսայում (այժմ Վանաձոր) Կարսից գաղթած ավանդական հայ ընտանիքում:

1944-ին միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նույն տարին էլ ընդունվեց Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, իր ապագա մասնագիտությունն ընտրելով հարազատ ժողովրդի պատմությունը: 1949-ին համալսարանն ավարտելուց հետո սկզբից անցավ կոմերիտական, ապա 1952-ից կուսակցական աշխատանքի: Սակայն նրա հիմնական աշխատավայրը Գիտությունների ազգային ակադեմիան էր, որի հետ կապեց նա իր ողջ դիտակցական կյանքը: 1954-ից մինչև օրս, սկզբում տարբեր պաշտոններ վարելով ԳԱԱ նախագահության համակարգում, իսկ 1979-ից ստանձնելով ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենի պատասխանատու գործը:

Գիտության մեջ նոր ոտք դրած երիտասարդը հետազոտության թեմա դարձրեց 1918–1920 թվականները՝ մեր ժողովրդի պատմության բախտորոշ տարիները: 1918-ին էր XX դ. մեր Ավարայրը, մեր ժողովրդի գոյամարտը՝ Արդաբաթի, Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը: Նույն 1918-ին էր մեր ժողովրդի դարավոր իղձի իրականացումը՝ հայ պետականության վերականգնումը, Առաջին Հանրապետության ծնունդը: Հ. Ավետիսյանի թեկնածուական (1960 թ.) և դոկտորական (1966 թ.) ատենախոսությունները վերաբերում էին հենց այդ շրջանի Անդրկովկասի և Հայաստանի երիտասարդության պատմության ուսումնասիրությանը: Հայերեն և ռուսերեն հրատարակված մի շարք մենագրություններում, շրջանառության մեջ մտցնելով պատկառելի քանակի արխիվային վավերագրեր,

Ավետիսյանն ստեղծեց Անդրկովկասի երիտասարդական կազմակերպությունների կազմավորման լիակատար պատկերը, մոռացության մշուշից հանելով և ընթերցող լայն հասարակությանը ծանոթացնելով հայրենանվեր գործիչների մի հոյակապ աստղաբույլի գործունեության մանրամասներին: Ուշագրավ է, որ այդ աշխատություններում հեղինակն օգտագործում է նաև Կոմինտերնի նյութերը:

Անցնում էին տարիները, իրենց հետ բերում խոհականություն, հավասարակշռված չափանիշներ, սակայն անփոփոխ էր մնում հեղինակի հետաքրքրությունների և հետազոտությունների շրջանը: Ղարաբաղյան շարժումը և դրան հաջորդող անցումային շրջանը Հ. Ավետիսյանին պարտադրեցին իրենց հրամայականը՝ սթափ հայացք մոտակա անցյալի պատմական դեպքերին և իրադարձություններին: Իրար էին հաջորդում գիտական պարբերականներում լույս տեսնող հոդվածները Մայիսյան հերոսամարտերի և դրանց մոռացված հերոսների, Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու և մեծ հետաքրքրություն ներկայացնող այլ իրադարձությունների մասին: Սակայն գիտական հոդվածներր նրան չբավարարեցին: 1993-ին ռուսերեն լույս տեսավ «Բրեստ-Լիտովսկ. ինչպես բռնակցվեցին Թուրքիային Կարսը, Արդահանը, Բաթումը» աշխատությունը: Արխիվային փաստաթղթի հենքի վրա ստեղծված այդ աշխատությունը մեր պատմության մոտակա անցյալի մշուշում խնամքով քողարկված «սպիտակ բծերից» մեկի հմուտ լուսաբանումն է: Ժամանակի իրադարձությունների ֆոնի վրա վերակենդանանում է խորհրդային պատվիրակության անդամների դիվանագիտական անկարողությունը, երբ առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիան իր պահանջներն էր առաջադրում Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությանը: Խորհրդային պատմաբանները բազմիցս անդրադարձել էին Բրեստ-Լիտովսկի բանակցություններին, դրանց ընթացքը լուսաբանել օր առ օր, ժամ առ ժամ, բայց երբեք չէին անդրադարձել մեր ժողովրդի համար այդքան ողբերգական և օրհասական պայմանագրի հոդվածներին: Հրանտ Ավետիսյանն իր առաջ դրեց հենց այդ խնդիրը և կատարեց գերազանց: Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ուսումնասիրությունը հեղինակի առաջ բացեց նոր հորիզոններ, ընդլայնվեցին նրա հետազոտության շառավիղները: Գիտնականը ձեռնամուխ եղավ նոր աշխատության ստեղծման՝ «Հայկական հարցը 1918 թ.» խորագրով, ուր վերը նշված մենագրությունը դարձավ այս նոր հետազոտության մեկ գլուխ: Այս աշխատության մեջ Հայկական հարցը քննարկվեց ոչ միայն Բրեստ-Լիտովսկի, այլև Տրապիզոնի և Բաթումի բանակցություններում, բացահայտվեց Հայոց Ազգային խորհրդի և ՀՀ պատվիրակության գործունեությունը Բեռլինում, Կ. Պոլսում, Վիեննայում և այդ հետնախորքի վրա գնահատվեց Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի կառավարությունների դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ: Աշխատության մեջ օգտագործված են Հայաստանի, Մոսկվայի, Վիեննայի և Բուդապեշտի արխիվների մեծ քանակությամբ նորահայտ և առաջին անգամ հեղինակի կողմից շրջանառության մեջ դրված վավերագրեր: Երկու աշխատություններն էլ արժանացան գիտական հասարակայնության բարձր գնահատականին: Բայց Ավետիսյանը չհանգստացավ:

Նա զգում էր, որ պարտք ուներ կատարելու հարազատ ժողովրդի առաջ: 1998-ին լույս տեսավ մի նոր աշխատություն՝ «Հայոց ազգային միասնության հաղթանակը» խորագրով: Թվում էր, կարճ ժամանակ էր անցել նախորդ մենագրությունից և հնարավոր չէր գրել նոր աշխատություն: Բայց անդամ թռուցիկ ծանոթությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրա վրա աշխատել է շատ երկար: Իբրև ներածություն՝ աշխատության մեջ ներկայացված է մի հետաքրքիր բաժին, ուր ներկայացված է ռուսական բանակում ծառայած հայ բարձրաստիճան զինվորականների մի հոյակապ փաղանգ: Նրանց թիվը բավական պատկառելի է: Շատերի անունները առաջին անգամ են հայտնի դառնում ոչ միայն ընթերցողին, այլև գիտական շրջանակներին: Գիրքը հայրենասիրության մի յուրահատուկ դաս է մեր երիտասարդ սերնդին, հայկական բանակի կազմավորման գործընթացի քննարկումը՝ հայկական առանձին կորպուսից սկսած, մինչև մայիսյան հերոսամարտերը, հայոց ազգային բանակի և Առաջին Հանրապետության ծնունդը:

Ընդհատվող աշխատանքը տարբեր արխիվներում, նոր վավերագրերի հայտնաբերումը, նոր մտահղացումների և հետազոտությունների սկիզբ դարձան: Պատմաբանը աշխատանքներ է սկսել նոր մենագրություն ստեղծելու ուղղությամբ: Ամենայն հավանականությամբ այն կլինի «Հայկական հարցը 1919 թվին»:

Վաստակաշատ հոբելյարը մենագրություններից բացի վերջին տարիներին հրատարակել է գիտական բազմաթիվ հոդվածներ, ուշագրավ և հետաքրքիր զեկուցումներով հանդես եկել միջազգային մի շարք գիտաժողովներում, աշխարհի գիտական հասարակության ուշադրությունը հրավիրել մեր ժողովրդի պատմության կնճռոտ հիմնահարցերի վրա: Մայնի-Ֆրանկֆուրտում, Մադրիդում, Կալիֆոռնիայում, Տուրինում, Մոսկվայում, Թբիլիսիում հնչել են Հրանտ Ավետիսյանի հետաքրքիր զեկուցումները հայ-գերմանական, հայ-իտալական, հայ-հունգարական, հայ-ռուսական, հայ-վրացական հարաբերությունների մասին՝ աշխույժ քննարկումներ և դրական արձագանքներ առաջացնելով: Այդ զեկուցումները և խիստ ուշագրավ հոդվածները («Կովկասյան տուն և համաթրքության նկրտումների հարցի շուրջը», «Կովկասյան հանրապետությունների կոնֆեդերացիայի գաղափարը 1918–1920 թթ.») լույս են տեսել առանձին ժողովածուներում. 1997-ին՝ Մոսկվայում, ռուսերեն, 1998-ին՝ Լոնդոնում, անգլերեն, Թբիլիսիում և Բուդապեշտում՝ դարձյալ ռուսերեն: Այդ հոդվածները գիտնական-քաղաքացի Հրանտ Ավետիսյանին բնորոշ երևույթներ են: Ամենուրեք, միջազգային դիտական բարձր ամբիոններում նա պաշտպանում է իր ժողովրդի դատը, չեշտում պատմական ճշմարտությունը:

Գիտահետազոտական աշխատանքին զուգահեռ Հրանտ Ավետիսյանը կատարում է եռանդուն մանկավարժական աշխատանք Հանրապետության տարբեր բուհերում: Երկար տարիներ նա հայ ժողովրդի պատմություն է դասավանդել և շարունակում է իր հայրենանվեր առաքելությունը Երևանի պետական համալսարանում ու Հրաչյա Աճառյանի անվան համալսարանում: Հանրապետության ակնառու պատմաբաններից շատերը նրան

համարում են իրենց ուսուցիչը, բարձր գնահատում նրա հոգատար հայրական վերաբերմունքը երիտասարդ ուսանողների, նաև հայ ժողովրդի պատմությունը իրենց մասնագիտությունը դարձրած, գիտության մեջ առաջին քայլերն անող ասպիրանտների նկատմամբ:

Խիստ թերի կլիներ Հրանտ Ավետիսյանի քաղաքացու և գիտնականի դիմապատկերը, եթե գեթ հպանցիկ չնշվեր այն պատկառելի աշխատանքը, որ կատարել և շարունակում է կատարել նա 1979-ից ի վեր մինչև օրս իբրև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն: Անցումային այս ծանր շրջանում, երբ ակադեմիական համակարգի ինստիտուտներից շատերը ճգնաժամ են ապրում, իր տնօրենի գործադրած անդուլ ջանքերի շնորհիվ պատմության ինստիտուտն ապրում է խաղաղ ստեղծագործական կյանքով, համալրվում երիտասարդ գիտաշխատողներով: Ինստիտուտի գիտաշխատողների հեղինակությամբ հրատարակվում են բազմաթիվ ուսումնասիրություններ: Այսօր ինստիտուտում աշխատում են ԳԱԱ 8 իսկական անդամ, պատմագիտության 34 դոկտոր և 49 թեկնածու: Ինստիտուտի կոլեկտիվը մեծ ներդրում ունեցավ հայ ժողովրդի պատմության դպրոցական դասագրքի 4 մասերի ստեղծման գործում: Ինստիտուտի բազմաթիվ գիտաշխատողներ եռանդուն մասնակցեցին Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված միջազգային և հայաստանյան գիտաժողովներին: Շատ գիտաշխատողներ շարունակում են աջակցել և մասնակցել Օշականի դպրատանը անցկացվող ամենամյա «Մաշտոցյան ընթերցումներին»: Տնօրենի համառ և հետևողական աշխատանքի շնորհիվ ինստիտուտում տիրում է ստեղծագործական մթնոլորտ: Չնայած 75-ամյա տարիքին Հրանտ Ավետիսյանը լի է եռանդով և իր օրինակով վարակում է բոլորին: Նրա մեջ միահյուսվել են Մարդը, տաղանդավոր գիտնականը, գիտության հմուտ կազմակերպիչը և Քաղաքացին: Նրա բնավորության մեջ խիստ ներդաշնակությամբ համատեղվում են ծնողներից ժառանգած կարսեցու խստությունը, համառությունը և պահանջկոտությունը լոռեցու անհուն բարության ե լիրիկական հոգու հետ: Նա մի պատկառելի դիտական կոլեկտիվի նահապետն է, ղեկավար և պատասխանատվության մեծ զգացումով օրինակ բոլորի համար:

Ցանկանք մեր հոբելյարին երկար տարիների կյանք, առողջություն, կանաչ ճանապարհ և անամպ երկինք, բեղուն գրիչ, նոր աշխատություններ և հոդվածներ ի փառս մեր ժողովրդի:

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ